

Ս. Յակոբայ վանքը կը թողու ու կ'եյնէ հայրապետին հետ մեկտեղ քաղաքը շրջի ու Սէյրէթուլահը (Էօմէրին մզկիթը) տեսնելը : Կ'երևի որ Ս. Յակոբայ գմբէթին վար առնուած գագաթը կամ սկաւառակը բաց էր մինչև 1610, վասն զի Levallant գաղղիացի ճանապարհորդը «le Pèlerin Veritable», Paris, 1613, էջ 508, 509 գիրքին մէջ կը գրէ թէ այս գմբէթը կտոր ծակ մը ունէր, ուրկէ անձրեւը կը թափանցէր, ինչպէս Ս. Յարութեան եկեղեցիին գմբէթը : Այս ծակէն սակայն թռչունները չեն կրնար անցնիլ, վասն զի անոր վրայ շինուած էր երկաթէ ցանցկէն մը, որուն արուեստական աշխատանքը հիացուցած էր ուխտաւորը : (Տե՛ս Camille Enlart, les Monument des Croisés dans le Royaume de Jérusalem. էջ 238) : Զուար Ճիյէրճի Օղլու քահանան ալ իր Ուղեգրութեան մէջ (Տե՛ս անդ, էջ 202-203), կը պատմէ զրոյց մը իբր թէ Սալահէտտին երբ եկեղեցւոյ իր կնքած դուռը կը բանար՝ երեք անձեր շապիկ հագած և մոմ ի ձեռին կը ներկայանան եկեղեցւոյ դրան առջևը կեցած . նոյն անձերն են Յակոբոս Տեառնեղբայր, Յակոբոս Զերեդեան և Մակար հայրապետ, որոնց պատկերները ցոյց կը տրուին Սալահէտտինի, որ կը յարէ թէ այդ անձերն էին որ երևցած են իրեն շապիկ հագած ու մոմ ի ձեռին, և այլն :

Հաննէ Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ գրաւման և շրջորհման զրոցայլին իր պատմուածքէն յետոյ կը յարէ (էջ 81) « . . . եւ վերստին շնորհեաց զվանքն բոլորովմբ . եւ գրեաց ի վերայ դրան վանից արապերէն անէծք ըստ օրինաց իւրեանց, թէ մի ոք առցէ զսա ի ձեռաց հայոց . և կայ մինչև ցայսօր » : Նոյն իմաստ է նաև Զուար Ճիյէրճի Օղլու քահանային գրածը . բայց վանքին դրան վրայ քանդակուած արաբերէն արձանագրութիւնը Սալահէտտինի կողմէ չէ, այլ Եգիպտոսի սուլթան Մէլէք Զահրը Չախմախն է (1438-1453) որ եգիպտացի Մարտիրոս պատրիարքին հիճրեթի 954 (= 1450)ին կը շնորհէ հրովարտակ մը որուն մէկ օրինակը կը քանդակուի վանքի արտաքին դրան կամարին տակ, միւս օրինակն ալ դռնէն ներս գիմացի պատին մէջ զետեղուած ջրի Զեպիլին վրայ : Արձանագրութեան իմաստը հետեւեալն է՝ թէ ոչ ոք բռնութեամբ վանք մտնելով անիրաւ տուրքեր պահանջէ վանականներէն . ու կը յարէ թէ անոնք որ հակառակը կը գործեն ու կ'անաստեն այս հրամանին